

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎՌԱՄՇԱՊՈՒՀԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ՏԱՐԻՆԵՐԸ

(399 - 419)

1. — Արչակունեաց Հարստութեան վերջալուսին վաչլող մեր այս պատուական թագաւորին իշխանութեան տեղութիւնը մին է մեր ազգային ժամանակագրութեան վիճելի հարցերէն: Իւրաքանչիւր բանասէր և պատմաբան տիրող անորոշութեան մէջ ջանացած է ճշգիւ թիւը Վառաշապուհի թագաւորութեան տարիներուն և զետեղել զանոնք մեր արդի քրիստոնէական թուականին շրջանակին մէջ:

Ահաւասիկ շարք մը հեղինակներու ուրոնք իրարմէ տարբեր շրջանի մը մէջ և այնքան տարբեր տեղութեամբ ընդունած են Վառաշապուհի թագաւորութեան ժամանակամիջոցը:

Ա. — Հ. Ն. Ակինեան⁽¹⁾ — 8 տարի — 400/401 — 409/410:

Բ. — Գ. Ֆետիկեան⁽²⁾ — 21 տարի — 398 — 418:

Գ. — Կ. Յ. Բատմաջեան⁽³⁾ — 22 տարի — 392 — 414:

Դ. — Հ. Ս. Տէր Մովսէսեան⁽⁴⁾ — 23 տարի — 391 — 414:

Ե. — Մ. Ա. Օրմանեան⁽⁵⁾ — 26 տարի — 389 — 414:

Այս ալիպան թուականներէն ո՞րն է ճիշդը: Պէտք է քննել:

2. — Մեր ունեցած պատմական առաջին կուսանն է Կորիւնի տուած հետեւալ տեղեկութիւնը, ըստ որուն Մաշտոց հայերէն զրեբու զիւտը յաջողութեամբ կատարել է տք եղիսթայէն կը վերադառնայ Վաղարշապատ և զիցիւրորդ ամի Վառաշ-

ապհոյ արքային Հայոց մեծացոյց⁽⁶⁾: Այս կարեւոր դէպքը, Հայոց դպրութեան սկզբնաւորութիւնը, տեղի ունեցած է դարձեալ Կորիւնի ուրիշ մէկ վկայութեան համաձայն՝ Յաղկերտի ութերորդ տարին⁽⁷⁾:

Այս երկու տեղեկութեան զուգորդութեամբ կը տեսնենք թէ Յաղկերտ առաջինի ութերորդ տարին կը համապատասխանէ Վառաշապուհի վեցերորդ տարին:

Արեւմտեան նախ և առաջ պէտք է զանել Յաղկերտի իշխանութեան սկզբնաւորութեան տարին:

3. — Արդի պատմաբաններէն և բանասէրներէն ընդհանրապէս ընդունուած է թէ Յաղկերտ առաջին զահ ելած է քրիստոնէական թուականի 398/9ին: Այդ հաշուով Յաղկերտի ութերորդ տարին կ'ըլլայ 404/5, որ միևնոյն ժամանակ կը հանդիսանայ Վառաշապուհի իշխանութեան վեցերորդ տարին: Այս հիման վրայ կը ճշդուի Վառաշապուհի զահակալութեան թուականը որ է 399/400:

4. — Այժմ հարկ է զիտնալ թէ քանի տարի թագաւորեց Վառաշապուհ: Այստեղ մեզի օգնութեան կը հասնի պատմահայրն Հայոց Մովսէս Խորենացի՝ զրեւով. «Վառաշապհոյ թագաւորեալ ամս քսան և մի՝ մեռանիս»⁽⁸⁾:

5. — Արեւմտեան պատմական այս տուեկներու հիման վրայ մեզի կը մնայ եզրակացնել թէ Վառաշապուհ թագաւորած է 399/400 — 418/19, քսան և մէկ տարի:

Ն. ԵՊՍ. ՄՈՎՍԻՍԻԱՆ



(1) Կորիւն, Վիեննա, 1952, էջ 79:

(2) Վարք Մաշթոցի, Երուսաղէմ, 1930, էջ 78:

(3) Իսկական Պատմութիւն Հայոց, 1914, էջ 220:

(4) Պատմութիւն Հայոց, Մասն Բ., 1923, էջ 148:

(5) Ազգապատում, 1912, էջ 286:

(6) Վարք Մաշթոցի, Ֆետիկեան, էջ 21:

(7) Նոյն, էջ 77:

(8) Մատենադարան, Վիեննայի, 1865, էջ 248: